

«ԷՅ-ՍԻ-ՓԻ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական Հաշվետվություններ և
Անկախ Աուդիտորական Եզրակացություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեփակված տարվա

ԵՐԵՎԱՆ
Օգոստոս 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» փակ բաժնետիրական ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվետվական տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՅ-ՍԻ-ՓԻ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նշված տեղեկատվության հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված 3,572,978 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 3,477,028 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 4-ում, Ընկերությունը հիմնական միջոցների գծով 2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում ճանաչել է արժեզրկում, որի կուտակված մնացորդային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2,584,181 հազար ՀՀ դրամ: Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված արժեզրկման գնահատման ճշտության վերաբերյալ, ինչպես նաև անկարող էինք ինքներս գնահատել հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը՝ ներառյալ արժեզրկման և մաշվածության հաշվարկի նպատակով կիրառվող օգտակար ծառայության ժամկետների գնահատականները հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Ընկերության հիմնական միջոցների և գործունեության առանձնահատկությունների պատճառով: Հետևաբար մենք անկարող էինք որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների գծով հնարավոր արժեզրկման գումարը, հատկապես՝ հաշվի առնելով գործունեության որոշ ուղղությունների դադարեցման հետևանքով տվյալ ուղղություններում օգտագործվող հիմնական միջոցների ապագա օգտագործելիության և շահագործման կարգավիճակի անորոշությունը:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված պաշարների կազմում առկա են 957,491 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պաշարներ, որոնց շարժի վերլուծությունը վկայում է այն մասին, որ կարող է անհրաժեշտ լինել դրանց

ինքնարժեքի նվազեցումը մինչև իրացման զուտ արժեք: Ընկերության ղեկավարությունը չի իրականացրել նշված պաշարների իրացման զուտ արժեքի գնահատում, հետևաբար մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված պաշարների արժեքի և համապատասխան ծախսերի գումարի վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

25 օգոստոսի 2025թ.
«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան
Տնօրեն/Աուդիտի ղեկավար



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2024թ. հազար դրամ	31.12.2023թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3 572 978	3 477 028
Ներդրումային գույք	5	184 317	189 953
Ոչ նյութական ակտիվներ		4 999	4 999
Տրամադրված փոխառություններ	6	2 424 171	8 687 491
Հետաձգված հարկային ակտիվներ	7	16 635	15 539
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		1 966	2 051
		6 205 066	12 377 061
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	3 119 819	3 015 011
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	559 323	786 398
Դրամական միջոցներ	10	17 698	69 202
Այլ ընթացիկ ակտիվներ		10	-
		3 696 850	3 870 611
		9 901 916	16 247 672
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		3 069 716	3 069 716
Կուտակված շահույթ		(529 829)	4 537 795
		2 539 887	7 607 511
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		51 859	53 384
		51 859	53 384
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	6 814 962	5 552 482
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	495 208	3 006 927
Այլ ընթացիկ պարտավորություններ		-	27 368
		7 310 170	8 586 777
		9 901 916	16 247 672

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ


2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար


	Ծնթ.	2024թ. հազար դրամ	2023թ. հազար դրամ
Հասույթ	13	80 442	127 669
Վաճառքի ինքնարժեք	14	(68 077)	(95 331)
Համախառն շահույթ		12 365	32 338
Վարչական ծախսեր	15	(206 768)	(176 269)
Այլ գործառնական եկամուտներ	16	74 469	106 793
Այլ գործառնական ծախսեր	17	(1 233 357)	(521 415)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ		1 226	(5 952)
Ֆինանսական ծախսեր		-	(219 025)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	18	(3 716 655)	15 112
Շահույթ մինչև հարկումը		(5 068 720)	(768 418)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	19	1 096	6 399
Տարվա զուտ շահույթ		(5 067 624)	(762 019)
Այլ համապարփակ եկամուտներ			
Տարվա համապարփակ արդյունք		(5 067 624)	(762 019)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2025թ. օգոստոսի 11-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:



Վանիկ Սիրադեղյան
Տնօրեն





Համլետ Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2024թ. հազար դրամ	2023թ. հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վաճառքից/ծառայություններից մուտքեր	87 189	98 603
Գործառնական այլ մուտքեր	1 560	262 543
Գնումների դիմաց վճարումներ	(980 025)	(1 048 932)
Վճարումներ աշխատակիցներին	(442 556)	(499 274)
Վճարումներ հարկերի և այլ վճարների գծով	(291 916)	(820 982)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(281 956)	(197 998)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1 907 704)	(2 206 040)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերման գծով վճարումներ	-	(112)
Ստացված տոկոսային եկամուտ	-	80
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	(32)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում	1 856 200	9 510 490
Վարկերի և փոխառությունների մարում	-	(7 275 740)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	1 856 200	2 234 750
Դրամական միջոցների զուտ հոսքեր	(51 504)	28 678
Փոխարժեքային տարբերություններ		
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	88 104	59 426
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	36 600	88 104

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	3 069 716	5 299 814	8 369 530
Մասնակիցներից ներդրումներ	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-
Տարվա շահույթ (վնաս)	-	(762 019)	(762 019)
Ներքին շարժեր	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	3 069 716	4 537 795	7 607 511
Մասնակիցներից ներդրումներ	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-
Տարվա շահույթ (վնաս)	-	(5 067 624)	(5 067 624)
Ներքին շարժեր	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	3 069 716	(529 829)	2 539 887

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

«ԷՅ-ՍԻ-ՓԻ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 09.08.1997թ.-ին «Մանես և Վալլեքս» փակ բաժնետիրական ընկերություն անվանումով, 06.12.2001թ.-ին անվանափոխվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության, իսկ 16.05.2025թ.-ին՝ «ԷՅ-ՍԻ-ՓԻ» փակ բաժնետիրական ընկերության: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սպանդարյան փ. Թիվ 4:

Ընկերության միակ բաժնետերն է պարոն Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Ընկերության հետ առնչություն չունեցող այլ ընկերություններում: Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների միջին թվաքանակը կազմել է 154 մարդ (2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 164):

Մինչև 2018թ. հոկտեմբեր ամիսը Ընկերության հիմնական գործունեությունը պղնձի արտադրությունն էր, 2019թ. հունիսից Ընկերության հիմնական գործունեությունը աղացագնդերի արտադրության համար «ԲՈԼՁ» ՓԲԸ-ին հումք էր մատակարարում, որը զբաղվում էր աղացագնդերի արտադրությամբ և արտադրանքն իրացնում Արցախի Հանրապետությունում: 2019թ. հոկտեմբերի սկզբից դադարեցվել են այդ աշխատանքները, քանի որ Ռուսաստանի Դաշնության «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի կողմից ԷՅ-ՍԻ-ՓԻ ՓԲԸ բաժնետերերի փոփոխություն կատարվեց՝ կապված Ընկերության դուստր ընկերություն հանդիսացող «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ վարկային պարտավորությունների դիմաց գրավադրված «ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ գույքի սահմանափակումների հետ: Այդ գործընթացի շրջանակում դուստր «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ բաժնետիրոջ փոփոխություն իրականացվեց: 2020թ. ապրիլի 30-ին Ընկերությունը ճանաչվեց սնանկ և նշանակվեց սնանկության կառավարիչ, որը հրապարակեց պարտատերերի ցանկը: Մինչև 2021թ. հոկտեմբերից առողջացման ծրագրի մշակումն ու իրագործումը Ընկերությունը պահպանվել է մնացորդային պաշարների վերամշակման և դրա վաճառքի հաշվին: Այնուհետև, մինչև 2022թ. մարտ ամսվա վերջը, Ընկերությունը գործունեությունը կազմակերպում էր նաև Արցախի Հանրապետությունում գործող «Բեյլ Մեթըլս» ՓԲԸ-ից առողջացման ծրագրով նախատեսված ֆինանսավորումների հաշվին՝ միտված արտադրամասի և կոմունիկացիաների վերականգնողական աշխատանքներին: 2022թ. ապրիլից աղացագնդերի արտադրամասը գործարկվել է և աշխատեցվել մինչև 2024թ. հուլիս ամիսը ներառյալ: Հիմնական գնորդը «Բեյլ Մեթըլս» ՓԲԸ-ն, Արցախի Հանրապետության դեպքերի հետ կապված դադարեցրել է Ընկերության արտադրանքի ձեռքբերումը: Ինչպես հայտնի է, 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը սկսեց

Արցախի Հանրապետության շրջափակումը, ինչը հանգեցրեց հումանիտար ճգնաժամի տարածաշրջանում, իսկ արդյունքում կորցվեց կապը Հայաստանի Հանրապետության հետ: «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ին վաճառքի ենթակա աղացագնդերի արտադրանքի մնացորդը (ավելի քան 3000 տոննա) Ընկերությունը պարբերաբար վաճառում է այլ գնորդների: 2024թ. հոկտեմբերի 6-ին Ընկերության սնանկության գործընթացը դադարել է, դատարանում գրանցված բոլոր պարտավորությունները մարվել են, մարվել են Սնանկության կառավարիչի նկատմամբ գրանցված բոլոր պարտավորությունները, որից հետո Ընկերությունը գործունեությունը շարունակում է սահմանափակ իրացման ծավալներով:

1.1 Ընկերության գործունեության հիմնական տեսակները՝

- Աղացագնդերի արտադրություն,
- Տեխնիկական և արտադրական թթվածնի արտադրություն,
- Շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ): ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից ընդունված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն են:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով և որո՞ծ պաշարների, որոնք ներկայացված են իրացման զուտ արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

2.4 Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
1 Եվրո	413.89	447.90
1 Ֆունտ ստերլինգ	499.27	515.38
1 Ռուբլի	3.71	4.5

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ՝

Դրամային հոդվածի հետ կապված փոխարժեքային տարբերությունները, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում հաշվետու կազմակերպության կատարած զուտ ներդրման մի մասը, կոնկրետ իրավիճակից ելնելով, ճանաչվում են Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների կամ արտերկրյա ստորաբաժանման անհատական ֆինանսական հաշվետվությունների շահույթում կամ վնասում:

2.5 Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են շարունակաբար: Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են փոփոխման և հետագա ժամանակաշրջաններում:

Ղեկավարությունը չի ակնկալում, որ անընդհատության սկզբունքի գնահատման հետ կապված որևէ անհամապատասխանություն կլինի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2023թ.-ից դադարեցվել է աղացագրերի հիմնական գնորդի՝ «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ գործունեությունը, իսկ 2023 և 2024 թվականները ամփոփվել է վնասով: Ղեկավարության գնահատմամբ վերջին տարիներին վնասների կրումը էական ազդեցություն չի ունենա Ընկերության անընդհատության սկզբունքի վրա, քանի որ՝

- Ընկերությունը ընդլայնում է նաև թթվածնի արտադրության և վերանորոգման աշխատանքների իրականացման գործունեությունը,
- Ներդրումային գույքի բարելավումները լրացուցիչ դրամական հոսքեր կստեղծի տարածքները վարձակալությամբ տրամադրելու պայմանագրերից,
- Վերանայվում են բոլոր ծախսային հոդվածները՝ հաշվի առնելով Ընկերության ակնկալվող եկամուտները,
- Արդիականացվում և/կամ վերամշակվում ու վաճառվում են ներկայումս չշահագործվող հիմնական միջոցներն ու երկարաժամկետ հատվածում շարժ չունեցող պաշարները:

Հետևաբար, Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է անընդհատության սկզբունքը, և հաշվետվություններում առկա չեն ճշգրտումներ, որոնք անհրաժեշտ կլինեին, եթե Ընկերությունը ունակ չլիներ շարունակել անընդհատ գործել:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Ֆինանսական գործիքներ

3.1.1 Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

3.1.2 Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

3.1.3 Ֆինանսական ակտիվների հեղադա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերությունի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

3.1.4 Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրականարժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Ընկերությունը հաշվառում է ներդրումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ

արդյունքում: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան չափումը, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրականարժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

3.1.5 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա: Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):
- Փուլ 3-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

3.1.6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է

որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են ելնելով ժամկետանց օրերից:

3.1.7 Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

3.1.8 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.2 Սեփական կապիտալ

Ընկերության սեփական կապիտալը ներառում է հետևյալ տարրերը. բաժնետիրական կապիտալ, չբաշխված շահույթ:

3.2.1 Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետոմսերի անվանական արժեքից: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 3.069.715 սովորական բաժնետոմսերից (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3.069.715 սովորական բաժնետոմսեր): Յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.000 դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1.000 դրամ):

3.2.2 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

3.3 Հիմնական միջոցներ

3.3.1 Ծանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և

բ) դրա սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով:

Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում:

Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման և արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ինքնարժեքի մաս:

3.3.2 Հեղազա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում չի ճանաչվում ամենօրյա սպասարկման ծախսումները: Փոխարենը, այդ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց: Ամենօրյա սպասարկման ծախսումները հիմնականում աշխատուժի և օգտագործված նյութերի ծախսումներն են, ինչպես նաև կարող են ներառել մանր դետալների ծախսումները: Այդ ծախսումների նպատակը հաճախ նկարագրվում է որպես հիմնական միջոցների միավորի «վերանորոգում, պահպանում և (կամ) սպասարկում»:

Հիմնական միջոցների որոշ միավորների մասերը կարող են պահանջել պարբերաբար փոխարինում: Հիմնական միջոցի արժեքում ճանաչվում են նման միավորի փոխարինվող մասի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի ընթացիկ արժեքը ապաճանաչվում է:

3.3.3 Հեղազա չափումը

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

3.3.4 Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցի միավորի գծով սկզբնապես ճանաչված գումարը բաշխում է ըստ դրա նշանակալի մասերի և այդ յուրաքանչյուր մասի համար մաշվածությունը հաշվարկում է առանձին: Հիմնական միջոցի միավորի մեկ նշանակալի մասը կարող է ունենալ օգտակար ծառայության նույն ժամկետը և մաշվածության հաշվարկման նույն մեթոդը, ինչ որ նույն միավորի մեկ այլ նշանակալի մասը: Նման մասերը խմբավորվում են մաշվածության գումարը որոշելիս: Հիմնական միջոցների մաշեցվող գումարը հավասար է դրա համախառն հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (մնացորդային արժեքը այն զուտ գումարն է կամ պիտանի նյութերի իրական արժեքը, որը Ընկերությունն ակնկալում է ստանալ ակտիվից դրա օգտակար ծառայության վերջում՝ դուրս գրման սպասվող ծախսերը հանելուց հետո) միջև տարբերությանը:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ընդունվում է հավասար 0-ի, եթե առկա չէ տեղեկատվություն այն բանի վերաբերյալ, որ մնացորդային արժեքը տվյալ հիմնական միջոցի կտրվածքով էական գումար է կազմում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը պարբերաբար վերանայվում է և, եթե նոր գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից, ընթացիկ և հետագա հաշվետու ժամանակաշրջանների մաշվածության գումարները ճշգրտվում են՝ անփոփոխ թողնելով նախորդ ժամանակաշրջանների համար հաշվարկված մաշվածության գումարները:

Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն իր ներկա վիճակով պատրաստ է օգտագործման համար (անկախ փաստացի օգտագործվելու հանգամանքից) և այլևս չի դադարեցվում, մինչև տվյալ հիմնական միջոցի ապաճանաչումը կամ «որպես վաճառքի համար պահվող» դասակարգումը՝ «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ին համապատասխան: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	- 20 տարի
Փոխանցող հարմարանքներ	- 20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 5-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-8 տարի
Արտադրատնտեսական գույք	- 5-8 տարի
Այլ	- 1-8 տարի

3.3.5 Հիմնական միջոցների ապաճանաչում

Հիմնական միջոցների միավորը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ ընդմիշտ դուրս է հանվում օգտագործումից և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը, որը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն, ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորը ապաճանաչվում է:

3.4 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը պահվում է կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ սովորական գործունեության ընթացքում վաճառքի, արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.5 Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն:

3.5.1 Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

3.5.2 Ընկերությունը՝ որպես վարձատու

Երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական, թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Ընկերությունն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Ընկերությունը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Գործառնական վարձակալության գծով ստացված վարձավճարներն Ընկերությունը ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես «այլ հասույթի» մաս:

3.6 Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների ձեռք բերման ծախսումները ներառում են ձեռք բերման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, կոմիսիոն վճարները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և պաշարների ձեռք բերման հետ ուղղակիորեն կապված այլ ծախսումները: Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԷ (առաջին մուտք առաջին ելք) արժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

3.7 Արժեզրկում

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

3.7.1 Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Ընկերության դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է այդ ակտիվը:

3.7.2 Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

3.8 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.9 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է պատվիրատուի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ պատվիրատուին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը: Հաշվետու տարում Ընկերության հասույթը հիմնականում կազմված է աղացագրերի վաճառքի գծով եկամտից և շինարարական վերանորոգման աշխատանքների կատարման ծառայությունից:

Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Կատարման պարտավորությունները և հասույթի ճանաչման ժամկետները

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցումից հասույթը սովորաբար ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները: Ընկերության հասույթի այն բաժինը, որն առաջանում է ապրանքների վաճառքից, հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների վերահսկողությունն արդեն իսկ փոխանցվել է հաճախորդին: Այս պահը (երբ վերահսկողությունը փոխանցվում է) որոշելու համար անհրաժեշտ է սահմանափակ դատողություն. ապրանքի ֆիզիկական առաքումը համաձայնեցված վայրում տեղի ունենալուց հետո Ընկերությունը գրկվում է փաստացի տիրապետման իրավունքից, սովորաբար ունենում է վճարում ստանալու ներկա իրավունք (որպես միանվագ վճար առաքման պահին) և չի պահպանում տվյալ ապրանքի հետ կապված նշանակալի ռիսկերը և հատուցումները:

Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթը հիմնականում բխում է ֆիքսված գնով պայմանագրերից, ուստի յուրաքանչյուր պայմանագրից ստացվող հասույթի չափը որոշվում է այդ հաստատուն գների հիման վրա:

Գումարի բաշխում կապարման պարտավորություններին

Պայմանագրերի մեծ մասի դեպքում վաճառված յուրաքանչյուր ապրանքի համար առկա է հաստատուն միավորի գին: Հետևաբար, այդպիսի պայմանագրերի ներքո պատվիրված յուրաքանչյուր միավորի համար պայմանագրային գնի բաշխման ժամանակ որևէ դատողություն չի կատարվում:

Ծառայությունների գծով յուրաքանչյուր պայմանագրի դեպքում կա միայն մեկ կատարողական պարտականություն, որին ամբողջական գումարը բաշխվում է:

Կապարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է պատվիրատուի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ պատվիրատուին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

3.10 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցվել կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.11 Շահութահարկ

3.11.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.11.2 Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր

տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.12 Ֆինանսական ծախսեր և եկամուտներ

Ֆինանսական եկամուտը ներառում է բանկային ավանդներից և տրամադրված փոխառություններից ստացվող տոկոսային եկամուտները: Տոկոսային եկամուտը ճանաչվում է հաշվեգրման պահին՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են վարկերի գծով վճարվելիք տոկոսները: Վարկերի գծով տոկոսները, բացի այն դեպքից, երբ դրանք կապիտալացվում են, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք հաշվեգրվում են:

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման և արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ինքնարժեքի մաս:

3.13 Կապակցված կողմերի բացահայտումներ

3.13.1. Կապակցված կողմ

Կողմը կապակցված է Ընկերությանը, եթե այդ կողմը.

ա/ ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ մեկ կամ ավելի միջնորդների միջոցով,

- վերահսկում է Ընկերությանը (50% և ավելի մասնակցություն)
- գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ,
- Ընկերությունը ունի մասնակցություն, որը ապահովում է նշանակալի մասնակցություն (20-50% մասնակցություն/բաժնեմաս),
- համատեղ վերահսկողություն է իրականացնում Ընկերության նկատմամբ,

բ/ Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամ են.

- տնօրենը,
- անձիք, որոնք ուղղակիորեն պատասխանատու են Ընկերության գործունեության պլանավորման, ուղղորդման և վերահսկողության համար,

գ/ վերոնշյալ անձանց ընտանիքի մտերիմ անդամ են.

- անձի զուգընկերը (ամուսինը),
- անձի երեխանները:

3.13.2. Կապակցված կողմերի գործարքներ

Կապակցված կողմերի հետ գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցում է կապակցված կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Եթե կապակցված կողմերի միջև եղել են գործարքներ, ապա Ընկերությունը բացահայտում է.

- կապակցված կողմի փոխհարաբերության բնույթը,
- գործարքի բնույթը,
- չմարված մնացորդները
- ժամկետները և պայմանները,
- ապահովված լինելը,
- մարման համար վճարվելիք հատուցման բնույթը,
- տրված կամ ստացված երաշխիքի վերաբերյալ մանրամասներ,
- կասկածելի պարտքերի պահուստները և նրանց գծով ճանաչված ծախսերը:

3.13.3 Առանցքային կառավարչական անձնակազմի գծով բացահայտումներ

Ընկերությունը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

- հատուցումները՝ կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
- ազատման նպաստները,
- մասնակցության վրա հիմնված վճարումները:

3.14 Փոփոխություններ հաշվապահական գնահատումներում, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

3.14.1 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՄ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.

- ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այնպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,
- բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման

ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

3.14.2 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները դրանք ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներառվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ:

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

3.14.3 Նախորդող ժամանակաշրջանի էական սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները դրանք մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար:

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Նախորդող ժամանակաշրջանի էական սխալները ուղղվում են հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո:

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

Ընկերության նախորդ տարիների էական սխալների ուղղումը հիմնականում կապված է հիմնական միջոցների անալիտիկ տվյալների համապատասխանեցման (վերահաշվարկման) հետ: Ճշգրտումն իրականացվել է՝ հաշվի առնելով նաև նախքան հաշվետվության վավերացումն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից բաժանիչ հաշվեկշռով ակտիվների հանձնման հանգամանքը և համապատասխան փաստաթղթերում հանձնված ակտիվների (հիմնական միջոցներ, ներդրումային գույք) ֆիքսված արժեքները:

3.15. Հաշվեքու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հողամասեր, շենքեր և կառուցվածք.	Փոխանցող հարամարանքներ, մեքենաներ և սարքավորումներ	Տրանս. միջոցներ	Արտադրատն- տեսական գույք, գործիքներ	Անավարտ շին.	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք							
Առ 1 հունվարի 2023թ.	4 117 869	5 104 750	296 522	157 359	26 950	270 287	9 973 737
Ավելացում/Վերադասակարգում	882	1 912	1 525	739	81 336	24 432	110 826
Օտարում/Դուրսգրում	(198)	(8 216)	(58 845)	(981)	-	-	(68 240)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	4 118 553	5 098 446	239 202	157 117	108 286	294 719	10 016 323
Ավելացում/Վերադասակարգում	221 295	51 179		2 406	48 839	4 874	328 593
Օտարում/Դուրսգրում	(184 961)	(36 941)		(3 749)	(97 706)	-	(323 357)
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	4 154 887	5 112 684	239 202	155 774	59 419	299 593	10 021 559
Կուրսակված մաշվածություն/արժեզրկում							
Առ 1 հունվարի 2023թ.	2 811 775	3 090 529	278 666	138 376	-	92 467	6 411 813
Մաշվածության գումար	22 477	26 157	5 744	1 187	-	139 218	194 783
Արժեզրկում	14 883	179	18 062	71	-	-	33 195
Նվազեցումներ	(20 553)	(4 712)	(74 410)	(821)	-	-	(100 496)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	2 828 582	3 112 153	228 062	138 813	-	231 685	6 539 295
Մաշվածության գումար	11 197	22 222	2 829	662	-	39 874	76 784
Նվազեցումներ	(155 637)	(8 702)	-	(3 091)	-	(68)	(167 498)
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	2 684 142	3 125 673	230 891	136 384	-	271 491	6 448 581
Ընթացիկ արժեք							
Առ 1 հունվարի 2023թ.	1 306 094	2 014 221	17 856	18 983	26 950	177 820	3 561 924
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1 289 971	1 986 293	11 140	18 304	108 286	63 034	3 477 028
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	1 470 745	1 987 011	8 311	19 390	59 419	28 102	3 572 978

Ընկերության հիմնական միջոցների կուտակված մաշվածության և արժեզրկման ընդհանուր 6,448,581 հազար ՀՀ դրամ գումարից արժեզրկման գումարը կազմում է 2,584,181 հազար ՀՀ դրամ, որն արդյունք է 2006թ. հիմնական միջոցների արժեքների վերագնահատման:

5. Ներդրումային գույք

	Հազար դրամ
Հոդամասեր, շենքեր	
Արժեք	
Առ 1 հունվարի 2023թ.	305 054
Ավելացում/վերադասակարգում	-
Օտարում/Դուրսգրում	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	305 054
Ավելացում/վերադասակարգում	-
Օտարում/Դուրսգրում	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	305 054
Կուտակված մաշվածություն	
Առ 1 հունվարի 2023թ.	109 465
Մաշվածության գումար	5 636
Օտարված ներդրումային գույքի կուտակված մաշվածություն	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	115 101
Մաշվածության գումար	5 636
Օտարված ներդրումային գույքի կուտակված մաշվածություն	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	120 737
Ընթացիկ արժեք	
Առ 1 հունվարի 2023թ.	195 589
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	189 953
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	184 317

6. Տրամադրված փոխառություններ

	Հազար դրամ	
	31.12.2024թ.	31.12.2024թ.
ԹԵՂՈՒՏ ՓԲԸ-ին	2 424 171	8 687 491
ԳՈՒԳԱՐՔԻ ԳԵՈ ՔԲԸ-ին	50 777	50 777
Փոխառությունների արժեզրկում (անհավաքագրելիություն)	(50 777)	(50 777)
	2 424 171	8 687 491

ԹԵՂՈՒՏ ՓԲԸ-ին տրամադրված փոխառությունը չի զեղչվել, քանի որ Ընկերությունը դրա զգալի մասի մարումն ակնկալում է 2025թ. ընթացքում՝ ելնելով 2025թ. կնքված փոխադարձ հաշվարկների ստուգման արձանագրությունից:

7. Հետաձգված հարկային (պարտավորություն)/ակտիվ

Հաշվետու տարվա հետաձգված հարկը հաշվարկվել է կիրառելով 18% դրույքը (2023թ.՝ 18%):
Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Հաշվեգրված/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդային վճարների պահուստ	6 399	1 096	7 495
Ֆինանսական գործիքներ	9 140	-	9 140
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	15 539	1 096	16 635
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	15 539	1 096	16 635

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Հաշվեգրված/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդային վճարների պահուստ	-	6 399	6 399
Ֆինանսական գործիքներ	9 140	-	9 140
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	9 140	6 399	15 539
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(9 140)	6 399	15 539

8. Պաշարներ

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Նյութեր	1 706 858	1 655 053
Արագամաշ առարկաներ	58 886	60 343
Անավարտ արտադրություն	147 051	65 197
Պատրաստի արտադրանք	1 206 344	1 233 738
Ապրանքներ պահեստում	680	680
	3 119 819	3 015 011

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	Հազար դրամ	
	31.12.2024թ.	31.12.2023թ.
Իրացումների գծով	266 074	566 313
Հարկերի գծով	169 273	95 064
Տրված կանխավճարներ	114 902	116 704
Աշխատավարձի գծով	2 007	157
Այլ	7 067	8 160
	559 323	786 398

10. Դրամական միջոցներ

	Հազար դրամ	
	31.12.2024թ.	31.12.2023թ.
Դրամարկղ	328	328
Ընթացիկ հաշիվներ ՀՀ դրամով	17 342	68 846
Ընթացիկ հաշիվներ ԱՄՆ դոլարով	28	28
	17 698	69 202

11. Վարկեր և փոխառություններ

	Հազար դրամ	
	31.12.2024թ.	31.12.2023թ.
ՔԵՅ-ԷՍ-ԷՄ-ԷՅ ՓԲԸ-ից փոխառություն	6 814 962	5 381 800
ԲԵՅՁ ՄԵԹԸԼՍ ՓԲԸ-ից փոխառություն	-	170 682
	6 814 962	5 552 482

Փոխառությունն անտոկոս է և ստացված է կապակցված կողմից:

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	440 364	398 647
Աշխատավարձի գծով պարտքեր	36 776	35 645
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ (բացառությամբ շահութահարկի)	14 208	2 243 956
Ստացված կանխավճարներ	558	325 480
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ		
Այլ պարտքեր	3 302	3 199
	495 208	3 006 927

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

13. Հասույթ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Արտադրանքի վաճառքից հասույթ	34 731	49 710
Ծառայությունների մատուցումից հասույթ	45 711	77 959
	80 442	127 669

14. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Արտադրանքի վաճառքից հասույթ	26 912	37 115
Ծառայությունների մատուցումից հասույթ	41 165	58 216
	68 077	95 331

15. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	128 728	125 206
Փոստի և հեռհաղորդակցության ծախսեր	1 321	661
ՀՄ մաշվածություն ու նորոգման ծախսեր	29 072	34 021
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	32 587	1 675
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3 869	6 629
Բանկային և ապահովագրական ծախսեր	332	443
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1 645	1 080
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	3 300	2 000
Այլ ծախսեր	5 914	4 554
	206 768	176 269

16. Այլ գործառնական եկամուտներ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական վարձակալությունից	23 300	65 198
Այլ պաշարների վաճառքից	38 130	20 494
Այլ եկամուտներ	13 039	21 101
	74 469	106 793

17. Այլ գործառնական ծախսեր

	2024թ.	Հազար դրամ 2023թ.
Հիմնական միջոցների լուծարման ծախսեր	215 163	21 796
Հիմնական միջոցների մաշվածություն ու նորոգման ծախսեր	91 202	10 156
Հիմնական միջոցների դուրսգրման ծախսեր	58 095	1 310
Ոչ նյութական ակտիվների դուրսգրման ծախսեր	299 988	-
Այլ պաշարների վաճառքների ծախսեր	42 189	16 145
Գործառնական վարձակալությամբ տրված գույքի մաշվածություն	5 750	5 636
Տույժեր, տուգանքներ և դատական ծախսեր	178 023	194 135
Պահանջարկային ծառայության վարձատրություն	150 000	135 000
Արտադրական ծախսումների սովորական մակարդակը գերազանցող ծախսեր	102 257	2 740
Սնանկության կառավարչի ծառայությունների վարձատրություն	28 739	103 585
Էլեկտրաէներգիա	18 985	27 553
Այլ ծախսեր	42 966	3 359
	1 233 357	521 415

18. Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)

	2024թ.	Հազար դրամ 2023թ.
Փոխառությունների դուրսգրում*	(3 717 530)	-
Հիմնական միջոցների օտարման եկամուտներ	-	16 083
Հիմնական միջոցների օտարման ծախսեր	-	(2 496)
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտներ	1 525	1 525
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	(650)	-
	(3 716 655)	15 112

Փոխառության գումարի դուրսգրումն (մասնակի դուրսգրում) իրականացվել է Ընկերության և նախկինում դուրս գրված ընկերություն հանդիսացող «Թեղուտ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի (հաշտության համաձայնագրի) և երկկողմանի հաստատված փաստաթղթերի հիման վրա:

19. Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	Հազար դրամ 2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի ծախս (եկամուտ)	1 096	6 399
	1 096	6 399

20. Ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է պարտքային, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ռիսկերին:

20.1 Պարտքային ռիսկ

Ընկերությունը երաշխիք դեբիտորական պարտքի գծով չի պահանջում:

Ընկերությունը ձևավորում է անհավաքագրելիության պահուստ:

20.2 Տոկոսադրույքի ռիսկ

Փոփոխական տոկոսադրույքով փոխառությունը Ընկերության համար առաջացնում է ապագա դրամական հոսքերի տոկոսադրույքային ռիսկ, իսկ հաստատուն տոկոսադրույքով փոխառություն՝ իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկ: Ղեկավարությունը չունի ֆիքսված կամ տատանվող դրույքաչափերի հանդեպ Ընկերության հակվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Սակայն նոր փոխառությունների ստացման ժամանակ Ղեկավարությունը դատողություններ է կատարում որոշելու համար՝ արդյոք հաստատուն, թե փոփոխական տոկոսադրույքն է առավել նպատակահարմար Ընկերության համար մարման ողջ ժամանակաշրջանի ընթացքում:

20.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի հանդեպ Ընկերության ռիսկը կրեդիտորական պարտքերի հետ, որոնք ենթակա են մարման արտարժույթով: Ղեկավարությունը չի հեջավորում արտարժույթի ռիսկի հանդեպ Ընկերության հակվածությունը:

Ընկերությունն ունի հաշվետու ամսաթվի դրությամբ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ֆունտ ստերլինգով արտահայտված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստերլինգ
2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Տրամադրված փոխառություններ	2 424 171	-	-
Դրամական միջոցներ	28	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	79 573	-	-
	2 503 772	-	-
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12 556	2 445	115 610
	12 556	2 445	115 610
Զուտ դիրք	2 491 216	(2 445)	(115 610)

2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստերլինգ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ	28	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	81 224	-	-
	81 252	-	-
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	40 185	2 646	119 340
	40 185	2 646	119 340
Զուտ դիրք	41 067	(2 646)	(119 340)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ֆունտ ստերլինգի նկատմամբ 5% (2023թ.՝ 5%) աճին/նվազմանը: 5%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով:

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլու նկատմամբ 5%-ով կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ֆունտ ստերլինգի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	124 561	2 053	(122)	(132)	(5 781)	(5 967)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

20.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է՝ որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում, առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

20.4.1 Իրացվելիության գործակից

Իրացվելիության ռիսկի մոնիտորինգի իրականացման նպատակով Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության գործակիցները՝ բացարձակ, ընթացիկ և ընդհանուր: Բացարձակ իրացվելիության գործակիցը հաշվարկվում է որպես դրամական միջոցների մնացորդի հարաբերությունը ընթացիկ պարտավորությունների մնացորդի նկատմամբ:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը հաշվարկվում է որպես դրամական միջոցների, ընթացիկ ֆինանսական ակտիվների և առևտրային ու այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հարաբերությունը ընթացիկ պարտավորությունների մնացորդի նկատմամբ:

Ընդհանուր իրացվելիության գործակիցը հաշվարկվում է որպես ընթացիկ ակտիվների մնացորդի հարաբերությունը ընթացիկ պարտավորությունների մնացորդի նկատմամբ:

Բացարձակ, ընթացիկ և ընդհանուր իրացվելիության գործակիցները 31.12.2024թ. և համադրելի ամսաթվի դրությամբ կազմում են.

	31.12.2024թ.	31.12.2023թ.
	հազար դրամ	հազար դրամ
Պաշարներ	3 119 819	3 015 011
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	559 323	786 398
Դրամական միջոցներ	17 698	69 202
Ընթացիկ պարտավորություններ	7 310 170	8 586 777
Իրացվելիության գործակիցներ		
Բացարձակ	0,002	0,008
Ընթացիկ	0,079	0,100
Ընդհանուր	0,506	0,451

21. Պայմանական դեպքեր

21.1 Ապահովագրություն

Ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրական շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջության վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգվորող օրենսդրությունը հաճախակի փոփոխվող է և հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Երբեմն տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության հիման վրա:

21.3 Դատական հայցեր

Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

22. Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է, ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և սեփականատիրոջ շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստային կապիտալը և կուտակված շահույթը):

Ընկերությունը չունի կապիտալի արտաքին ներգործության պահանջներ:

22.1 Ֆինանսական կախվածության գործակից

Ֆինանսական կախվածության գործակիցը 31.12.2024թ. դրությամբ կազմում է 39% (31.12.2023թ. դրությամբ՝ 21%):

	31.12.2024թ.	31.12.2023թ.
	հազար դրամ	հազար դրամ
Ֆինանսական պարտավորություններ	6 814 962	5 552 482
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	51 859	53 384
Այլ ընթացիկ պարտավորություններ	495 208	3 034 295
Ընդամենը փոխառու միջոցներ	7 362 029	8 640 161
Սեփական կապիտալ	2 539 887	7 607 511
Ֆինանսական կախվածության գործակից	290%	114%

23. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հավանական փոխկապվածություն դիտարկելիս հաշվի է առնվում կապակցվածության էությունը և ոչ միայն իրավական կողմը:

Ընկերության միակ բաժնետերին է պարոն Վալերի Մեջլումյանը:

Գործարքներ

Հազար դրամ

2024թ.

2023թ.

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ

Ծառայությունների և ապրանքների իրացում

79 538

97 672

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում

384 053

285 642

Փոխառությունների ստացում

1 856 200

6 110 050

Ստացված փոխառությունների մարում

423 038

728 250

Մնացորդներ

Հազար դրամ

2024թ.

2023թ.

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

6 098

5 897

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

22 967

379 498

Ստացված փոխառություններ

6 814 962

5 381 800

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ ընկերության տնօրենը և փոխտնօրենը:

Առանցքային կառավարչական անձնակազմը տարվա ընթացքում ստացել է.

Հազար դրամ

2024թ.

2023թ.

Աշխատավարձ, պարգևատրումներ և այլ հատուցումներ, ներառյալ հարկերը

54 547

53 377